30

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
Մ.Գ.Թ., ԴՈՑԵՆՏ Հ.ԲԻՇԱՐՅԱՆ

04 հուլիս 2023

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՐԾԻՔԸ

Սաբինա Թեմուրի Մադոյանի՝ «Տարածքային փոփոխությունների իրավաչափության հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ

իրավաբանական գիտությունների աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի 2023 թվականի հունիսի 30-ին կայացած նիստում (արձանագրություն թիվ 6):

Մասնակցում էին՝

Իրավագիտության ամբիոնի վարիչ ի.գ.թ. Ի. Իսկանդարյանը, ամբիոնի դասախոսներ՝ ի.գ.դ. պրոֆեսոր Ա. Խաչատրյանը, ի.գ.թ., դոցենտ Վ. Թորոսյանը, ի.գ.թ., դոցենտ Մ.Մուրադյանը, ի.գ.թ. Լ.Տոնոյանը, ի.գ.թ. Դ.Սարգսյանը, ի.գ.թ. Վ.Պողոսյանը, ի.գ.թ. Ա.Թադևոսյանը, Ա. Գյուլումյանը, Լ.Զիրոյանը, Ա.Բիշարյանը, Ա.Նահապետյանը, Գ. Ադոնցը, Լ. Մանուսաջյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը, կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է պետությունների տարածքային փոփոխությունների իրավաչափության հիմքերի ուսումնասիրությանը միջազգային իրավունքում: Ատենախոսն իր առջև նպատակ է դրել բազմակողմանի ուսումնասիրել տարածքի նկատմամբ տիտղոսի և տարածքային փոփոխությունների ինստիտուտը, վեր հանել ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները ու զարգացումները և բացահայտել դրանց կիրառական նշանակությունը պետությունների արդի պրակտիկայում: Համապատասխանաբար, ատենախոսը ձեռնամուխ է եղել մի շարք խնդիրների լուծմանը, այնպիսիք, ինչպիսիք են տարածքի նկատմամբ տիտղոսի ինստիտուտի հասկացության բացահայտումը, տիտղոսի ձեռքբերման տարբեր մեխանիզմների դասակարգումն ու ուսումնասիրումը, օկուպացիայի, պրեսկրիպցիայի, լռելյայն համաձայնության ինստիտուտների կիրառման միջազգային դատական պրակտիկայի վերլուծումը, 20-րդ դարի ընթացքում տարածքի նկատմամբ պետությունների իրավունքների հաստատման մեխանիզմների վերաբերյալ միջազգային իրավակարգի էական փոփոխությունների՝ ուժի գործադրման արգելքի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վերհանումը, ինչպես նաև տարածքի նկատմամբ տիտղոսի հաստատման հարցում միջազգային պայմանագրերի նշանակության պարզաբանումը: Համադրելով ատենախոսի կողմից նշված նպատակներն ու խնդիրները թեմայի բովանդակության հետ, կարող ենք փաստել, որ դրանք միմյանց հետ համահունչ են:

Հետազոտության թեմայի արդիականությունը կասկածից վեր է: Ներկայիս գլոբալացված և փոխկապակցված աշխարհում շարունակում են ի հայտ գալ տարածքային փոփոխությունների հետ կապված նոր մարտահրավերներ և խնդիրներ: Դրանք ներառում են անջատողական շարժումները, սահմանային վեճերը, ռեսուրսների շուրջ հակամարտությունները, ինչու չէ նաև գլոբալացման ազդեցությունը պետության ինքնիշխանության վրա: Տարածքային փոփոխությունների իրավաչափության քննարկումները ժամանակակից

մարտահրավերներին դիմակայելու և զարգացող տարածքային դինամիկայի վերաբերյալ իրավական պատկերացումներ ապահովելու տեսանկյունից կարևոր են: Տարածքային փոփոխությունները կարող են ավելի լայն ազդեցություն ունենալ տարածաշրջանային և գլոբալ կայունության վրա: Դրանք կարող են ազդել առկա աշխարհաքաղաքական հարաբերությունների վրա և մտահոգություններ առաջացնել խաղաղության և անվտանգության պահպանման վերաբերյալ, ուստի և նմանատիպ հետազոտություններն օգնում են գնահատել տարածքային փոփոխությունների իրավաչափությունն ու հետևանքները, նպաստում են միջազգային մակարդակում կայունության պահպանման քննարկումներին: Այսպիսով կարծում ենք, որ թեման արդի է ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար՝ առավել ևս Արցախի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման և հետխորհրդային պետությունների միջև պետական սահմանների սահմանագծման համատեքստում:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, իսկ ատենախոսության մեջ տրված են որոշակի գործնական առաջարկություններ: Ցանկալի կլիներ տեսական և գործնական մասով գիտական նորույթների սահմանման հարցում հեղինակն առավել հասցեական մոտեցումներ ներկայացներ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած՝ միջազգային հարթակներում Հայաստանի Հանրապետության պետական սահմանների հարցերի շահարկման մասով:

Այդուհանդերձ, քննարկվող հետազոտության տեսական և գործնական նշանակությունը արժեքավոր է առավելապես ՀՀ պետական շահերի սպասարկման տեսանկյունից: Հեղինակը փորձ է կատարել Հայաստանի Առաջին Հանրապետության արևմտյան շրջանների առնչությամբ հավակնություններ ներկայացնելու մեխանիզմները քննարկել և իրավաչափորեն կարևորել է գործնականում դրանց անդրադառնալը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև միջազգային-

իրավական հիմնահարցերի կարգավորման համար պատասխանատու պետական մարմինների կողմից:

Հետազոտությունը գրված է գիտական լեզվաոճական պատշաճ մակարդակով և իրավաբանական եզրութաբանության պահանջներին համապատասխան:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում հեղինակը լիարժեքորեն օգտագործել է նորմատիվ նյութեր և տեսական-մասնագիտական գրականություն, հարուստ նախադեպային իրավունքի աղբյուրներ, ինչի շնորհիվ ատենախոսությունում ձևակերպված եզրահանգումները և առաջարկությունները ներկայանում են որպես կարևոր և հրատապ, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել որոշակի դիտողություններ և նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

1. Հեղինակը խոսում է ժողովրդի ազատ կամարտահայտության մասին, սակայն անդրադարձել է միայն գաղութատիրական ժամանակաշրջանում գոյություն ունեցող վարչական տարածքները պետությունների տարածք վերածելու ինստիտուտին, մինչդեռ աշխատանքը գործնական առավել նշանակություն կունենար, եթե ատենախոսը քննարկեր և լուծումներ առաջադրեր առ այն, թե որքանով կարող են վարչատարածքային բաժանման օրենսդրությունը կամ Ալմա Աթայի Հռչակագիրը այսօր հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության սահմանների սահմանազատման և սահմանագծման համար:
2. Հեղինակը քննարկել է այն տեսական հնարավորությունը, որ Հայաստանի Հանրապետությունը կարող է ներկայացնել Առաջին Հանրապետության արևմտյան տարածքները Թուրքիային փոխանցելու իրավաչափության հավակնության հարց: Թե տեսական, թե գործնական մակարդակներում այս հարցը կարևոր է, սակայն գիտական նորույթ հանդիսանալու համար, հեղինակը պետք է կարողանար տիտղոսի ձեռբերման և տարածքային

սահմանների փոփոխելիության համատեքստում լուծումներ առաջադրեր, ինչը ինքնին կլիներ գործնական նշանակություն ունեցող գիտական նորույթ:

3. Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթում ատենախոսը նշում է՝ «Ցեսիան՝ որպես տարածքի նկատմամբ տիտղոսի ձեռքբերման հիմք, գոյություն ունենալով դարեր ի վեր, ենթադրում է որ տարածքը կարող է զիջվել կամովին: ... Այդ իսկ պատճառով ներկայումս ցեսիան՝ որպես տարածքային փոփոխությունների հիմք, էական դերակատարություն չունի. 1945թ.՝ ՄԱԿ-ի հիմնադրումից հետո, ցեսիայի դեպքերը սակավաթիվ են, և այդ խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք, որպես կանոն վերաբերում են կա՛մ սահմանների հստակեցմանը, կա՛մ սահմանամերձ ոչ մեծ տարածքների զիջմանը»: Հեղինակը, ցեսիան դիտարկելով որպես տարածքային փոփոխությունների հիմք, նշում, միևնույն ժամանակ նշում է, որ այն էական դեր չունի: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը կարողանար տալ ցեսիայի հիմքով տարածքային փոփոխության այն գիտական ձևակերպումը, որը կարող էր բխեցվել իր կատարած վերլուծությունից:

Բացի այդ, այս նույն դրույթի կրկնությունը կարելի է նկատել ատենախոսության 35-րդ էջում /ռուսերեն տարբերակում էջ 28, 61-րդ հղում/, որպես մեջբերում մեկ այլ հեղինակի խոսքերից: Տպավորություն է ստեղծվում, առաջադրված երկրորդ դրույթում տեղ գտած դատողությունը ատենախոսինը չէ:

4. Ատենախոսության մեջ նկատվում են մտքի կրկնություններ, որոնք անհարկի կարող են թուլացնել պաշտպանության ենթակա դրույթները /6-րդ դրույթը կրկնվում է 129-րդ էջում /ռուսերեն տեքստում՝ 103-րդ էջ/, 5-րդ դրույթը կրկնվում է 109-րդ էջում / ռուսերեն տեքստում՝ 87-րդ էջ /:

Եզրակացություն

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ Ս. Մադոյանի կողմից հրատարակված հոդվածներում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Սույն կարծիքում նշված դիտողություններն, ըստ էության կարող են հաղթահարվել մասնագիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանելու դեպքում և չեն ազդում Ս. Մադոյանի ատենախոսության ընդհանուր դրական արդյունքի վրա:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սաբինա Թեմուրի Մադոյանի՝ «Տարածքային փոփոխությունների իրավաչափության հիմքերը ժամանակակից միջազգային իրավունքում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.06- «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀԵՀ իրավագիտության ամբիոնի վարիչ՝ ի.գ.թ. Ի. Իսկանդարյան

Հաստատում եմ Ի. Իսկանդարյանի ստորագրությունը

ՀԵՀ գիտական խորհրդի քարտուղար՝ ի.գ.թ. , դոցենտ Վ. Թորոսյան